

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՅՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ» ՔԱՐԻՋ


ՀԱՅԻ ԱՃԻՄԵԱՆ

ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

**ՄԵԼԻՔ - ԹԱՆԳԵԱՆ**

ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻ ԱՌԹԻՒՆ 1886-1926



ՎԵՆԵՏԻԿ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏԳԱՐԱՆ

1926





ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ “ՅՈՒԲԵԼԵԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ,, ԹԱԻՐԻԶ

Հ Ա Յ Կ Ա Ճ Ի Մ Ե Ա Ն

Տ ԵՐ Ն ԵՐ Ս Է Ս Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս



Մ Ե Լ Ի Ք - Թ Ա Ն Գ Ե Ա Ն

Ի Ի Ր Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Է Ո Ւ Թ Ե Ա Ն

Ք Ա Ռ Ա Ս Ն Ա Մ Ե Ա Յ Յ Ո Ւ Ե Լ Ե Ա Ն Ի Ա Ռ Թ Ի Ի 1886-1926

*Handwritten:* Միւր 374


*Handwritten:* Միւր 1931



Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Մ Ի Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1926





## Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ջ

Ատրպատականի Հայոց արդի թեմական Առաջնորդ Գեր. Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք-Թանգեանը ներկայ Հայ հոգևորականության մեջ, պատկառելի և պատշաճոր տեղ է գրառում:

Նորին Սրբազնորքիւնը, երկար տարիներից ի վեր է, որ Հայոց բոլոր հատաձևերում, վայելում է անսահման ժողովրդականություն և համակրանք:

Իբրև Հայ-ազգային եկեղեցու հաշտարիւմ և անձնէք Հովիւ և հասարակական վաստակաւոր գործիչ, նա քառասուն տարի է, որ հրապարակ է իջել Հայ կեանքում և ամենայն բարեխղճներեանը կատարել է իւր մարդկային-հասարակական պարտքը՝ ազգի և հայրենիքի հանդէպ:

Այս հանգամանքը նկատի ունենալով էր, ահա, որ Ատրպատականի Հայոց ազգային մարմինները, հասարակական հիմնարկությունները և արհեստակցական միությունները, որոշել են՝ ներկայ 1926 թւի Յունիսի 12-ին, Ներսէսի Մեծի Հայրապետի տօնի օրը, մեծ շնորհով և արժանավայել հանդիսաւորութեամբ, թաշրիգում տօնել նորին Սրբազնութեան՝ մասնաւորապէս ազգային և հասարակական գործունէութեան քառասունամեայ յորելեանը, (1886-1926) որին զոգադիպում են նաև Սրբազան Յորելեարի՝ Ծննդեան վարսնամեակը (1866-1926), հոգևոր կոչման քսանհինգամեակը (1901-1926) և Ատրպատականի Հայոց Առաջնորդական պաշտօնավարութեան տասնևհինգամեակը (1912-1926):

Ատրպատականի Հայոց քսանևից ազգային-հասարակական մարմինների և միությունների ներկայացուցչական ընդհանուր ժողովը, իւր միջից ընտրեց « Յորելեանական Անտրոնական Յանձնախումբ » որի կազմը հետևեալն է.


Նախագահ՝ Տէր Կարապետ Առաջ Քահանայ Մանուչեան, քարտուղար՝ Հայկ Աձեմեան, գանձապահ՝ Խոսրով Առաքեան, անդամներ՝ Տիկին Հե-

դիւնէ Եօրժ, Տիկիւն Մարիամ Նազարէկեան, Պ. Պ. Կարապետ Պիօ-  
նեան, Սմբատ Բոչոյանեան, Համբարձում Ծերունեան, Բժ. Ռոչրէն Տէր  
Ստեփանեան և Մարգար Յակոբեան:

Ընդունելով « Յոբելեանական Կենտրոնական Յանձնախումբ »-ի առա-  
ջարկը, մենք ի գիր առինք Սրբազան Յոբելեարի կեանքի և քառասուն-  
մեայ գործունէութեան այս ոչրշագիծը, որ անկաշայցնում ենք Հայ հա-  
սարակոչքեան:

ՀԱՅ ԼՃԻՄԵԱՆ

Թաշրիզ 1 Յունւար 1926





ԳԵՐԱՊՈՍԻՒ ԼԱՅՐ ՍՐԲԱԶԱՆ ՅՈՐԵԼԵԱՐ  
ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ  
ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱԶՆՈՐԴ ԼՍՅՈՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ

Ս. Ռ. Ա. Զ. Ն. ՈՐԳ. Հ. Ա. Յ. ՈՅ. Ա. ՏՐՊԱ. ՏԱ. ԿԱ. Ն. Ի

ԻՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՅՈՒՆԵՍԿԱՆԻ ԱՌԹԻՒ 1886-1926



Ա.

ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ ՏՈՂՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Մելիք-թանգեան տոհմի ցեղագրութեան հնագոյն պատմութեան տւեալները, հաստատում են, որ Մելիք-թանգեան գերդաստանի նախնիքները, Բագրատունեաց մայրաքաղաք՝ Անիից գաղթելով, բնակւել են Էջմիածնի գաւառի Շահրխար գիւղում: (Արագած լեռան ստորոտի վրայ):

Շահրխարում, իբրև հին և ազգեցիկ տոհմ, յայտնի էին Շահխարոշնիկերը\*, որոնցից սերել էին՝ բազմաթիւ նշանաւոր մելիքներ, իշխաններ և այլ կարևոր դէմքեր:

Շահխարոշնի և Մելիք-թանգեան գերդաստանների միջում (Շահրխարում), յառաջանում է սուր, ներքին պայ-

\* Այս հին և պատմական տոհմի շտաբիդներն են. 1) Ս. Էջմիածնի միաբան և յայտնի տեղագիր Յովհաննէս Եպիս. Շահխարոշնի: 2) Հ. Յ. Գաշնակցութեան տաղանդաւոր ընկերաբան Աւետիք Շահխարոշնի և 3) նշանաւոր Հայ դերասան Արշաւիր Շահխարոշնի:

քար՝ առաջնութեան գիրք և ազդեցութիւն ձեռք բերելու նպատակով: Այդ պայքարը այնքան է խորանում, որը վերջանում է արիւնալի ընդհարումներով և մարդասպանութեամբ:

Ստեղծւած այս ծանր դրութիւնից և Երևանի պարսիկ խաների բռնութիւններից ազատելու համար, Մելիք-թանգեանները, ստիպւած են լինում ամբողջ տոհմով և շարժական հարստութեամբ հեռանալ Շահրխարից:

Մելիքական գերդաստանի այս մեծ կարաւանը հասնում է Սիւնեաց Աշխարհի Գարալագեազ գաւառը, ուր և բնակւում են նրանք՝ իբրև ժամանակաւոր հանգրուան:

Կարճ ժամանակից յետոյ\*, Մելիք-թանգեանները անցնում են Զանգեզուր և իբրև վերջնական բնակավայր հաստատում են Բռնակոթ գիւղում, ուր դարեր շարունակ ապրել են այդ մեծ ու պատմական տոհմի իշխան-մելիքները, որոնց ժառանգները սերունդից սերունդ, շարունակելով հասել են մինչև մեր օրերը:

Մելիք-թանգեան գերդաստանի իշխան-մելիքները, վաւերական վկայութեանց համաձայն, եղել են բարձրահասակ, յաղթանդամ և քաջակորով լեռնականներ, որոնցից շատ յայտնի են դարձել մանաւանդ՝ Մելիք-թանգի և Մելիք-Փանի երկու եղբայրները, որոնք իրենց խոհեմ և ժողովրդանւէր գործունէութեան շնորհիւ, յաջողում են մեծ ազդեցութեան և համբաւի տիրանալ, դառնալով Սիւնեաց Աշխարհի նշանաւոր իշխանները:

Պարսից շահերը, յատուկ հրովարտակներով, հաստատում են Մելիք-թանգեան գերդաստանի մելիքական կոչումը և իշխանութիւնը:

Մելիք-թանգի և Մելիք-Փանի եղբայրները, իրենց ամբողջ կեանքը անց են կացնում կռիւների մէջ:

Իրենց սեփական զօրախմբերով, նրանք անդադար կռիւ-

\* Գժբախտաբար չը կարողացանք ստուգել թ.թ. դարից առաջ կատարւած այս իրողութեանց թւականներն ու մանրամասնութիւնները:

ներ են մղել վաչկատուն և աւազակարարոյ հարեան ցեղերի դէմ, Հայ ժողովրդի գոյութիւնը փրկելու համար:

Երկու մելիք եղբայրները մեռնում են խոր ծերութեան մէջ, մեծ վիշտ պատճառելով Սիւնեաց Աշխարհի Հայութեան:

Սրանց մահւանից յետոյ, Մելիքութեան տիտղոսը և իշխանութեան իրաւունքը, սերունդից սերունդ շարունակում է, մինչև ԺԹ.րդ դարու առաջին քառորդը, երբ Չանգեղուրում նշանաւոր դարձան Մելիք-Թանգի Բ. և Մելիք-Ղուկաս երկու եղբայրները, որոնք ժառանգ և շարունակողը հանդիսացան իրենց նախնեաց մելիքական իշխանութեան:

Մելիք-Թանգի Բ.ը ամբողջ Չանգեղուրում հռչակ է ստանում, իբրև քաջ, անձնէր, խոհեմ և արդարադատ իշխան: Նա անուանի է դառնում նաև իւր շինարարութեամբ, որի մասին բանաւոր վկայութիւններից զատ, կան նաև դրաւոր յիշատակութիւններ: Մեծանուն Հայր Ղևնդ Ալիշանը հետևեալն է յիշատակում.

« Վերջին շարայարող պատմութեան Սիւնեաց կամ վիճակին Տաթևու ծանուցանէ զի ի մերում դարու Բոնակութեցի Մելիք-Թանգի (Թանգի) և եղբայր իւր Ղուկաս և որդին Ղազար — « Ըստ բարեգութ ջերմեռանդութեանն « իւրեանց շինեալ են ի գլուխ Արեգլու լեռն կոչեցելոյն « բազում աշխատութեամբ՝ զերկոսին քարւանսարայ թաղ- « բանդ (կամարակապ) ի պահպանութիւն և յապահովութիւն « երթևեկաց ի ժամանակս ձմեռնային սաստիութեան. և մէկ « պատուական կամարակապ կամուրջ\* անխախտելի շինեալ ի « վերայ Բազարչայ (Որոտան) անուանեալ մեծ և ահեղագոչ « գետոյն\*\* »:

Մելիք-Թանգի Բ.ն ևս յաջողում է, պարսից արքունիքից, հրովարտակ (Ֆէրման) ստանալ իւր իշխանութեան իրաւունքներն աւելի հիմնաւորելու համար:

\* Այս կամուրջը այժմ կայ և կոչւում է « Մելիք-Թանգու կամուրջ »:

\*\* Տես՝ « Միտական » էջ՝ 210:

ԺԹ.րդ դարու առաջին քառորդին, (1826-1827 թ.)  
ուսական բանակները արշաւեցին Արարատեան և Սիւնեաց  
Աշխարհների վրայ, որոնք հեծում էին պարսիկ խաների  
բռնութեանց ներքոյ:

Արարատեան Աշխարհում, ուսական բանակներին յա-  
ռաջապահ հանդիսացան՝ Հայ կամաւորական զօրագնդերը,  
ղեկավարութեամբ « Պաշտպան Հայրենեաց » Ներսէս Արքե-  
պիսկոսոս Աշտարակեցոյ (ապա կաթողիկոս Ամենայն Հայոց):

Իսկ Սիւնեաց Աշխարհում, Մելիք-Թանգի Բ.ը և Մե-  
լիք-Աղարէկը, կազմակերպել էին բազմաթիւ Հայ կամաւո-  
րական թեթև զօրախմբեր, որոնք անմիջապէս ուսական  
բանակներին միացան և իբրև յառաջապահներ սկսեցին հար-  
ւածել ու հալածել պարսիկ խաների հրոսակախմբերին: Պար-  
սիկները չարաչար պարտութեան ենթարկեցին, փախան և  
Արարատեան ու Սիւնեաց Աշխարհները միացան ուսաց  
իշխանութեան:

Այս յաղթանակներից յետոյ Մելիք-Թանգի Բ.ը դի-  
մում է ուսաց Նիկողայ Ա. կայսրին և ստանում է արքա-  
յական հրովարտակ, որով և վաւերացում է Մելիք-Թանգ-  
եան տոհմի Մելիքութեան իշխանութեան իրաւունքները:

Խոր ծերութեան հասած բազմավաստակ Մելիք-Թանգի  
Բ.ը վախճանում է 1843 թւին, թողնելով Մելիքութեան  
Ժառանգ Պետրոս Բէկ Մելիք-Թանգեանին:



Բ.

ԾՆՈՒՆԴԸ, ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԸ

Սիւնեաց Աշխարհի Զանգեզուր գաւառի Բռնակոթ գիւղը Մելիք-Թանգեան գերդաստանի պապենական և հայրենի բնակավայրն է, ուր մինչև այժմ էլ ապրում են այդ մեծ և հին տոհմի շառաւիղները:

Այս գիւղում 1860-ական թւերին, իբրև Մելիք-Թանգեան տոհմի տաներէցը, ապրում էր Պետրոս-Բէկ Մելիք-Թանգեանը, որն ամուսնացել էր Զաւահիր անունով բարեպաշտ և պարկեշտ մի հայ կնոջ հետ:

Այս ամուսնութիւնից ծնւել էին չորս զաւակներ\*, որոնցից երկրորդը Նիկողայոսն էր, — այժմ՝ Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք-Թանգեանը:

Նորին Սրբազնութիւնը ծնւել է յիշեալ Բռնակոթ գիւղում, 1866 թւի Մարտի 16/29-ին:

Նիկողայոսը իւր մանկութիւնն անց է կացրել Սիւնեաց լեռնաշխարհում, հայրենի անդնդախոր և ծաղկազարդ հովիտների մէջ, պուրակների շաքներում, գետափերին, աղբիւրների մօտ, գիւղական պարզ ու նահապետական միջավայրում և մելիքական բազմանդամ ընտանիքի ծոցում:

Մանկութիւնից ապրելով ազատ երկրի, ազատ բնութեան գրկում, իւր հայրենիքի վիթխարի լեռները և խոր ձորերը,

\* Միւս եղբայրներն էին — 1) Սիմոն Բէկ (անդրանիկը) որն իբրև ժողովրդական գործիչ Զանգեզուրում վայելում էր յարգանք: Նա վախճանեց Թաւրիզում 1921 թւի Նոյեմբերի 10-ին: 2) Պարոն Բէկ և 3) Արշակ Բէկ:

ինչպէս ամեն լեռնցու, նոյնպէս և նրա վրայ դրոշմում են  
իրենց խոր հետքերը — առոյգ մարմին, լայն սիրտ, վեհ  
հոգի, սոկուն կամք, պարզ, ուրախ և համարձակ բնաւորու-  
թիւն, որը ժամանակի ընթացքում աւելի է զարգացնում:

Երբ նա 10 տարեկան է դառնում, նրա հայրը — Պե-  
տրոս-Յէկը, որդուն ուսման է տալիս Բռնակոթի խալիֆա-  
յական դպրոցում, 1876 թւին:

Մի տարւայ մէջ նա կարողանում է ստանալ նախնական  
ուսումը, որից յետոյ, 1877 թւի ամրան, հայրը իւր ներկո-  
ղայտին տանում է Էջմիածին, ուր և ընդունւում է Գեորգեան  
Հոգևոր Ճեմարանում, Մեծագործ Գէորգ Գ.րդ կաթուղի-  
կոսի օրով:



Գ.

ԷՋՄԻԱՆՆԻ ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Էջմիածնի Գեորգեան Հոգևոր Ճեմարանը, Հայ կեանքում, իւր գոյութեան սկզբից (1874) մինչև վերջը (1918), հանդիսացաւ Հայ ազգային դաստիարակութեան և Հայագիտական առարկաների ուսուցման գլխաւոր բարձրագոյն դպրոցը:

Ճեմարանը 44 տարւայ ընթացքում, Հայ ազգին տւեց հարիւրաւոր ուսանող-մտաւորականներ, որոնցից շատերը փայլեցին՝ Հայ հոգևոր, գրական, հասարակական, յեղափոխական, պետական և զանազան ասպարէզներում:

Ահա այս զուտ Հայազգային բարձրագոյն դպրոցում-Ճեմարանումն էր, որ Նիկողայոս Մելիք-Թանգեանն ընդունւեց, միջնակարգ կրթութիւն ստանալու համար:


Ճեմարանի տեսուչը, 1880-ական թւերի սկզբին, յայտնի քիմիկոս Արշակ Նահապետեանն էր, (ապա Նահապետ Եպիսկոպոս Նահապետեան):

Նա այնքան խիտ և ճնշող կարգեր էր մտցրել Ճեմարանում որ, մանաւանդ ուսանողութիւնը չէր կարող հանդուրժել: Եւ ահա բռնկուեմ է աշակերտութեան և ուսանողութեան ըմբոստութիւնը, տեսչի անհանդուրժելի բռնութիւնների դէմ: Ըմբոստների ղեկավարներից մէկն էլ Նիկողայոս Մելիք-Թանգեանն է լինում: Ըմբոստների մի ստուար խումբ Ճեմարանից հեռանում է, մինչև որ նրանց պահանջները կատարուեմ են, նախկին խիտ և ճնշող օրէնքների վերացումով:

Նիկողայոսը Ճեմարանի դասարանական բաժնում իւր

միջնակարգ կրթութիւնը ստանալուց յետոյ, անցնում է լատինական բաժինը, ուր երեք տարի (1884-1886) կանոնաւոր կերպով հետևում է Հայագիտական առարկաներին, մինչև որ, 1886 թւի դարձան աւարտում է Ճեմարանի տասնամեայ լրիւ դասընթացքը և քննութիւն տալուց յետոյ, ստանում է համապատասխան վկայականը:

Ճամանակակից ուսումով դաստիարակւած, Հայ ժողովրդին ու հայրենիքին ծառայելու սիրով ոգևորւած նիկողայոսը, Ճեմարանն աւարտելուց յետոյ, որոշում է նւիրուել հասարակական գործունէութեան:



Գ.

ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Հայոց մտաւոր, գրական և ազատագրական շարժումների և վերածնութեան սրտամութեան մէջ, 1880ական թւականները շատ նշանակալից տեղ են գրաւում:

Հայ մամուլն ու գրականութիւնը, իրենց յառաջադիմութեան լուսադոյն շրջանն էին անդրում: Հայկական ազատագրութեան և անկախ հայրենիքի գաղափարը ժամանակակից գրականութեան և մամուլի առջև ընդարձակ հորիզոններ էր բացել:

Ազգային, գրական և հասարակական գործիչները՝ խօսքով ու գործով դարձնում էին Հայ ժողովրդի քաղաքական միտքն ու ձգտումները, որոնք կենդանւում գործադրելու և նրանց հասնելու համար, միայն մէկ միջոց կար — Հայ ժողովրդի մտաւոր դաստիարակութիւնն էր այդ:

Ամենուրեք—կովկասում և Տաճկահայաստանում—հիմնուել էին կրթա—կուրտութեան բազմաթիւ ընկերութիւններ ու մարմիններ, որոնք Հայ գիւղերում և գաւառական կենտրոններում բաց էին անում դպրոցներ, գրադարաններ և մշակութային հիմնարկութիւններ:

Ժամանակակից Հայ երիտասարդութիւնը զարգացել ու անուել էր մեր գրական և հասարակական ուսմանների և դեկափարների — Խ. Աբովեանի, Մ. Նալբանդեանի, Խրիմեան Հայրիկի, Մ. Նազարեանի, Հ. Ղ. Մ. Ալիշանի, Գր. Արծրունու, Գամառ—Քաթիպայի, Գր. Օտեանի, Ն. Ռուսի—նեանի, Մ. Պէշիկիթաշեանի, Բաֆֆիի և այլոց ազատասունչ գաղափարներով, որոնց իրականացման համար՝ կային մի

չարք ասպարէզներ—հոգևոր կոչում, գրականութիւն, մամուլ, դպրոց մի խօսքով բանաւոր, գրաւոր և գործնական քարուղութեան զանազան ասպարէզներ:

Ազգին ու հայրենիքին ծառայելու պարտքն ու գիտակցութիւնը, իւրաքանչիւր գաղափարական հայ երիտասարդի մէջ, ոգևորութեան թռիչքներ էին յառաջ բերում, որով և շատերը մոռանալով իրենց անձնական հանգիստը, նետում էին հասարակական այս ու այն ասպարէզը, հայ ժողովրդին ծառայելու ազնիւ զգացումներով տոգորւած:

Ազգային ոգով դաստիարակւած և հայ ժողովրդի վերածնութեան գաղափարով ոգևորւած Նիկողայոս Մելիք-Թանգեանն ևս ճեմարանն աւարտելուն պէս նւիրուեց իւր ժողովրդի դաստիարակութեան գործին, ընտրելով ուսուցչական ասպարէզը, որին նւիրել էին շատերը և գործնական արդիւնք էին տւել:

Հայ գիւղում, ուսուցիչ-դաստիարակ դառնալը 1880-ական թւերին, համարւում էր մի գաղափարական գործունէութիւն: Ժողովրդի խոնարհ դասի մանուկների միտքն ու սիրտը ժամանակակից ուսման լուսով դաստիարակելը, մի անգնահատելի և մեծ գործ էր, կատարեալ անձնագոհութիւն, քանի որ ամեն տեղ խոչընդոտներ էին յարուցւում նոր մտքերի և ուսուցման նոր մեթոտի դէմ: Մի խօսքով լոյսը պատուում էր խաւարի թանձր արգանդը:

— «Պայքար լռաաշորեոց ընդդեմ խաշարեոց»: Այս խօսքերով է բնորոշում խրիմեան հայրիկը, ժամանակակից գաղափարական հայ երիտասարդութեան կատարած լուսաւոր աշխատանքը՝ խաւարի, մոլեռանդութեան և սգիտութեան պաշտպանների դէմ:

Այսպէս էին պայմաններն ահա, երբ Նիկողայոս Մելիք-Թանգեանը 1886 թւի աշնան իբրև ուսուցիչ, մտաւ իւր ծննդավայր Բոնակոթ գիւղը: Նա հիմնովին բարեփոխեց գիւղի խալիֆայական դպրոցը, ուր տաս տարի առաջ (1876) ինքն էր ստացել իւր նախնական ուսումը: Նա հանդիսացաւ

Գալրոցի ղեկավարն ու ողին և գիւղի հասարակական գործերի հրահանգիչն ու առաջնորդը:

Իբրև ուսուցիչ, նա երկու տարի մեծ անձնւիրութեամբ գործեց բռնակրթում, դաստիարակելով գեղջուկ մանուկների սիրան ու հողին, մինչև որ 1888/89 ուսումնական տարե- սկզբին, Ղարաբաղի Հայոց Թեմական Գալրոցի (Շուշի) հո- գարարձութիւնը նրան հրաւիրում է ուսուցչական պաշտօնի:

Իւր հայրենի գիւղից նա անցնում է Շուշի և իբրև ուսուցիչ սկսում է պաշտօնավարել Թեմական Գալրոցում:

Ղարաբաղի Հայոց Թեմական Գալրոցում, 1890ական թւերի սկզբներին, պաշտօնավարում էին մի խումբ գաղա- փարական ուսուցիչներ, որոնք տողորած էին Հայ Ժողովրդի ազատագրական շարժումներով: Հայ յեղափոխական կուսա- կցութիւններն այդ թւերին, արդէն շարժման մէջ էին: Զի- նական խմբերը գործում էին Տաճկահայաստանում: Կովկասից և այլ վայրերից երկիր էին մտնում, Հայ ազատասէր և անձնէր երիտասարդներ՝ կրթական, հասարակական և յե- դափոխական գործերով:

Տաճկահայ Ժողովրդի ազատագրութեան հարցը ժամա- նակակից Հայ երիտասարդութեան յենակէտ-խտէալն էր:

Օրւայ նշանաբանն էր — « Ժողովրդով և ժողովրդի համար »:


Այս ոգևորութեան տարիներին էր ահա, որ Թեմական Գալրոցի երեք ուսուցիչները — Նիկողայոս Մելիք-Թանգեանն իւր երկու պաշտօնակիցներով, որոշում են թողնել ուսուց- չութիւնը և անցնել Տաճկահայաստան (Վան) տանջւած Հա- յութեան ազատագրութեան գործին ծառայելու համար:

Այդ երեք ուսուցիչները յաջողում են սեփական ձիեր գնել և Շուշուց գաղտնի դուրս գալով, Զանգեզուրից անց- նելով համում են Նախիջևան, այս տեղից էլ, գիշերանց մտնում են Արաքսը և դուրս են գալիս պարսից ափը, ու ղևորւելով դէպի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը:

Յաջորդ առաւօտ, երբ փորձում են շարունակել ճանա-

374

Պնշ  
1931



պարհը, ընդհարում են ունենում յիշեալ վանքին մօտիկ վարմազխար գիւղի թուրքերի հետ, որոնք մեծ բազմութեամբ յարձակել էին նրանց վրայ: Կռիւք գնալով լուրջ կերպարանք է առնում: Երեք ուսուցիչներն անզօր են լինում թուրքերի ամբոխին դիմադրել, ուստի և ձիերը սրարչաւ քշելով վերադառնում են վանքը և այստեղից էլ գնում են Նախիջևան, ուր ուսաց ստիկանութիւնը նրանց խիստ քննութեան է ենթարկում: Զիաւորները Գարալագեազի վրայով հասնում են Շուշի և շարունակում են իրենց ուսուցչական պաշտօնը: Այսպիսով ջուր է ընկնում նրանց՝ Երկիրը գնալու ծրագիրը:

Խրիմեան Հայրիկը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելուց յետոյ, Երուսաղէմից ճանապարհւում է Կովկաս (1893): Հայոց Հայրիկը այցելում է նաև Շուշի քաղաքը, որի բնակչութիւնը մեծ պատրաստութիւն է տեսնում, Մեծ Մարդուն արժանավայել ընդունելութիւն ցոյց տալու համար:

Թեմական Գալրոցի ուսուցչական խումբը, ղեկավարութեամբ Նիկողայոս Մելիք-Թանգեանի, եռանդուն աշխատանք են կատարում, հայրենանւէր Հայրիկին ժողովրդական ցոյցերով դիմաւորելու համար:

Հայութիւնը շատ հանդիսաւոր ընդունելութիւն է ցոյց տալիս Խրիմեանին: Այդ օրը Շուշին դառնում է յեղափոխական ցոյցերի և ոգևորութեան մի ասպարէզ:

Նիկողայոս Մելիք-Թանգեանը, իւր ընկերներով, ամեն կերպ աշխատել էին Հայոց Հայրիկի գաղափարներով և անձնական ներկայութեամբ, ոգևորել Գարաբազի Հայութեան:

Պէտք է շեշտել նաև այն հանգամանքը, որ Շուշեայ Թեմական Գալրոցը Հայ ժողովրդին տւել է բազմաթիւ մտաւորական և ուղղմիկ երխտասարգներ և գործիչներ, որոնց սիրան ու միտքը մարդկեց այն միժնորսրտում, որը ստեղծւեց այդ գալրոցում, Մելիք-Թանգեանի և ընկերների պաշտօնավարութեան տարիներին: Սրանք էին, որ Շուշում յառաջ բերին հասարակական եռ ու զեռ կեանք, զարկ տւին գալրոցական

գործի հիմնաւորման և կարողացան կերտել այնպիսի միջա-  
վայր, ուր յաճախ շօշափում էին ազգի և հայրենիքի վերա-  
ծնութեան և ազատագրութեան հարցերը:

Մելիք-Թանգեանը Ղարաբաղի թեմական Դպրոցում  
պաշտօնավարում է մինչև 1893 թւի վերջը, երբ դպրոցում  
ծայր է առնում ուսուցչական ամբողջ խմբի (Լևոն Սարգսեանի  
տեսչութեան օրով) դժգոհութիւնն ու պայքարը, Ղարաբաղի  
թեմական Առաջնորդ Տէր կարապետ Եպիսկոպոս Այվազեանի  
դէմ: Առաջնորդը, իւր կուսակիցներով, սկսում է ձեռնամուխ  
լինել դպրոցի ներքին գործերին, ցանկանալով ուսուցչական  
խումբն իրեն ենթարկել: Ուսուցիչները մերժում են Առաջ-  
նորդի առաջարկները: Յառաջանում է կղերական-աշխարհա-  
կան սուր պայքար: Ուսուցչական խումբը շրկարողանալով  
հանդուրժել՝ հեռանում է դպրոցից: Հեռացողների մէջն է  
լինում նաև Մելիք-Թանգեանը, որ 1894 թւի սկզբին հրա-  
ւիրում է Բագու, իբրև ուսուցիչ պաշտօնավարելու « Հայոց  
Մարդասիրական Ընկերութեան » դպրոցում:

Նիկողայոս Մելիք-Թանգեանը մօտ երկու տարի ու կէս  
պաշտօնավարում է « Մարդասիրական Ընկերութեան » դպրո-  
ցում, մինչև որ 1896 թւի գարնան ուսաց ցարական դա-  
ժան և հայակեր կառավարութիւնը փակել է տալիս կովկասի  
Հայոց ազգային դպրոցները, որով և ցրւում են ուսուցիչներն  
ու աշակերտները:

Դպրոցները փակւելուց յետոյ, Մելիք-Թանգեանն որո-  
շում է գնալ Պետերբուրգ, համալսարանական կրթութիւն  
ստանալու համար:



Ե.

ՈՒՍԱՆՈՂ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Կովկասահայ հարուստների մէջ, իբրև բարերար և հասարակական գործիչ, պատուաւոր տեղ է գրաւում Հաւքար-ձոռն Մելիքեանը, որ հաճոյքով է ստանձնում Նիկողայոս Մելիք-Թանգեանի բարձրագոյն կրթութեան ամբողջ ծախսերը:

Նիկողայոս Մելիք-Թանգեանը 1897 թւին գնում է Պետերբուրգ և ընդունում է տեղւոյն համալսարանը, հետևելով իրաւարանութեան:

Համալսարանում, նա անձնապէս նւիրում է Հայոց հին իրաւունքի ուսումնասիրութեան և մասնաւորապէս մանրակրկիտ կերպով ծանօթանում է Հայոց եկեղեցական իրաւունքի պատմութեան հետ:

Նիկողայոս Մելիք-Թանգեանը 1900 թւին յաջողութեամբ աւարտում է Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական ֆակուլտետը ստանալով համապատասխան վկայական:

Համալսարանն աւարտելուց յետոյ, ուսանող Մելիք-Թանգեանը գալիս է Էջմիածին, շարունակելու համար իւր ազգային ու հասարակական գործունէութիւնը՝ հոգևոր ասպարէզում: Սակայն այս մասին յետոյ:

Պետ 1850ական թւերից առաջ, բարձրագոյն ուսում ստացած իւրաքանչիւր Հայ երիտասարդը, նւիրական պարտականութիւն էր համարում ծառայել իւր ազգին ու հայրենիքին, գործելով այս ու այն հասարակական ասպարէզում:

Հասարակական գործունէութեան գիտակցութիւնը Հայ

ուսանողութեան մէջ, աւելի հիմնաւորեց մանաւանդ, 1860աւ-  
կան թւերից յետոյ, երբ Հայ մամուլն ու գրականութիւնը  
վերածնութեան ուղիի մէջ մտան:

Հայ ուսանողը, ազգային, քաղաքական և հասարակական  
յառաջադիմութեան գաղափարներով ոգևորւած, ազգային  
վառ յոյսերով օրօրուն, թռիչքներ էր գործում, ի գին ամեն  
տեսակ զոհողութեան, իւր մտաւոր և մարմնաւոր ուժերը  
հասարակութեան տրամադրելու համար: Համալսարանական  
Հայ ուսանողը, անպայման ցանկանում էր հասարակական  
նր և է ասպարէզում երևալ և մանաւանդ գործել:

Գաղափարական Հայ ուսանողի մի կատարեալ մարմնա-  
ցում է հանդիսանում, ահա, Նիկողայոս Մելիք-Թանգեանը:



2.

ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ

Յորելեար Սրբազանը-Գեր. Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք-Թանգեան — Հայոց գրականութեան համար, նշանակալից աշխատանք է կատարել:

Ղարաբաղի Հայոց թեմական Գալրոցում ուսուցիչ եղած Ժամանակ նա հրատարակել է Շուշում, «Աշխարհարարի Քերականութիւնը»\* խորագրով մի դասագիրք, որը Ժամանակին շատ գործածական դարձաւ Կովկասահայ գալրոցներում: «Աշխարհարարի Քերականութիւնը» առանձին հրատարակութեամբ լոյս է տեսել նաև Նոր-Ջուղայում:

Հայոց մամուլի պատմութեան մէջ մի կարևոր և ուշագրաւ էջ է կազմում «Մշակ» և «Նոր-Պար» թերթերի դադափարական պայքարը, պահպանողական և ազատական ուղղութեամբ:

Այս պայքարի մասին, Մելիք-Թանգեանը լոյս է բնծայել «Մշակ և Նոր-Պար, կոշտակցութիւններ և մի քանի խնդիրներ\*\*», անունով մի գիրք, որով հեղինակը քննութեան է առնում յիշեալ թերթերի պայքարի, Հայ քաղաքական կուսակցութիւնների և հասարակական մի քանի խնդիրների էութիւնը, որի մասին նա վերլուծումներ և խորհրդածութիւններ անելուց յետոյ տալիս է իւր եզրակացութիւնն ու յորդորները:

Սակայն Մելիք-Թանգեանի գրական գլուխ գործոցը,

\* Տպւած՝ Շուշի, 1893:

\*\* Տպւած՝ Մոսկւայում, 1894:

իւր « Հայոց Եկեղեցական Իրաւունքը\* » խորագրով երկհատոր պատկառելի աշխատասիրութիւնն է, որը իւր տեսակի մէջ առաջինն է համարում: Այս երկասիրութեան հրատարակութիւնը պատճառ դարձաւ, որ հեղինակը Հայոց հին իրաւունքի պատմութեան ուսումնասիրութեամբ զբաղւողներին շարքին դասեց:

Հեղինակը իւր աշխատութեան Ա. գրքով ի յայտ է բերում Հայոց եկեղեցական իրաւունքի պատմութեան աղբիւրները, որոնց մէջ « գլխաւոր և հիմնական » տեղ է գրաւում Սուրբ Գիւրքը (Աստուածաշունչ): « Ընդհանուր աղբիւրների երկրորդ մասն է եկեղեցու գործնական կեանքը, նրա աւանդութիւնները և սովորութիւնները » (էջ՝ 35): Երեսունին գլուխների մէջ (էջ՝ 28-264) հեղինակը շատ մանրամասն և բարեխիղճ կերպով քննում է եկեղեցական իրաւունքի ընդհանուր աղբիւրները, որոնք այնքան օգտագործւել են մեր հին եկեղեցական հայրերի կողմից, Հայոց եկեղեցու իրաւունքի շէնքը կառուցելու համար:

Ընդհանուր աղբիւրներից յետոյ հեղինակն անցնում է ազգային աղբիւրներին, որոնց մասին խօսում է քառասուն գլուխների մէջ (էջ՝ 307-672):

Հայոց ազգային եկեղեցու ընդհանուր ժողովները, Հայոց Հայրապետների սահմանած եկեղեցական կանոնները և այլն, մանրամասնութեամբ քննութեան են առնւած հեղինակի կողմից և հասնում են մինչև մեր օրերը, (Խրիմեան Հայրիկի կաթուղիկոսութիւնը):

« Պետական Աղբիւրներ » մասում հեղինակը 45 գլուխների մէջ ներկայացնում է Ռուսաց և Տաճկաց կառավարութիւնների կողմից Հայոց եկեղեցուն տրւած իրաւունքներ:

\* « Հայոց Եկեղեցական Իրաւունքը »: Ա. Գիւրք: Ներածութիւն և Աղբիւրներ: Աշխատութիւն՝ Ն. Վ. Մելիք-Թանգեանի: Շուշի. Տպարան Եղիսաբեթ Մ. Մահտեսի Յակոբեանի. 1903. էջ՝ 807:

Այս հատորը, հեղինակը նւիրել է իւր բարերար Համբարձում Մելիքեանին:

ըլ<sup>\*</sup>: (էջ՝ 673-772): Երեք գլխով ևս զանազան աղբիւրներ յիշատակելուց յետոյ (էջ՝ 773-784): Վերջացնում է առաջին գիրքը:

Հեղինակը լոյս ընծայեց նաև «Հայոց Եկեղեցական Իրաւունքի<sup>\*\*</sup>» Բ. Գիրքը, Հայ աղգային եկեղեցու կազմակերպութեան և կառավարութեան մասին: Այս հատորը ամբողջովին նւիրւած է մեր եկեղեցու ներքին կեանքի օրէնսդրութեան, իրաւասութեան և Հայոց եկեղեցու նւիրապետութեան:

Բ. Գիրքը բովանդակում է քառասուն և չորս ընդարձակ գլուխներ:

«Հայոց Եկեղեցական Իրաւունքը» իւր ժամանակին, առանձին ուշադրութեան արժանացաւ և Հայոց պարբերական մամուլում լոյս տեսան մի քանի մատենախօսական յօդւածներ, որոնց մէջ ամենից աւելի ուշադրաւ և հմտալիցը, վիեննայի Մխիթարեան Հարց «Հանդէս Ամսօրեայ» ուսումնասիրութեամբ<sup>\*\*\*</sup> լոյս տեսած՝ Հայր Ներսէս Ակինեանի մատենախօսութիւնն է, որից քաղում ենք հետևեալ տողերը.

«Գրքին անունն ինքնին բաւական է գործոյն սրչափ ծանրակշիռ և կարևոր ըլլալը մեզի գուշակել տալու. վասնզի տակաւին Հայ եկեղ. մատենագրութեան այս կարևորագոյն կէտը մասնաւոր ուշադրութեան չէ առնւած:

«... պէտք ենք խոստովանիլ թէ իբրև իւր առաջադիր նպատակին համար պատրաստուած գործ, ամենայն կերպով կրնայ ծառայել: Այսպիսի գործի մը պատաղողը միայն գիտէ այն դժուարութիւններն, որոնք ընդառաջ կ'ելլեն աշխատասիրողին հանդէպ: Մեր թուած պակասութիւններն, զորոնք


\* Պոլոթեկիան (1836) Կովկասի Հայոց և Ազգային Սանճանադրութիւնը տանկահայոց համար (1860):

Հ. Ա.

\*\* «Հայոց Եկեղեցական Իրաւունքը» Բ. Գիրք: Կազմակերպութիւն և կառավարութիւն: Ն. վ. Մելիք-Թանգեան: Շուշի: Արագատիպ Բ. Տէր-Սահակեանցի: 1905: էջ՝ 279:

\*\*\* Տես՝ «Հանդէս Ամսօրեայ» 1904. Յուլիս. էջ 206 և 213:

գրքին ազգայն կատարելութեան համար ի մէջ բերինք, ոչինչ պէտք են երևալ, եթէ ի նկատի առնունք որ ազգայնոց մէջ առաջին ձեռնարկութիւնն է: Յանկալի է, որ այս աշխատասիրութիւնս իւր յարակից մասերովը գրգիռ ըլլայ աւելի կատարելութեան բարձրացնելու հայ կանոնադրոց պատմութիւնն և ուսումնասիրութիւնն, որուն սկիզբն արդէն գրած է աշխատասիրութեամբս յետ Տաշեանի՝ Մելիք-Թանգեան »:



Է.

ՀՈԳԵՒՈՐ ԿՈՉՈՒՄԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Հայ կեանքում, 1850ական թւերից սկսած, հոգևոր ասպարէզը, դարձաւ հասարակական գործունէութեան և ժողովրդին աւելի մօտենալու մի միջոց : Հոգևոր ասպարէզը, համեմատաբար աւելի ազատ և անկաշկանդ էր հասարակական գործունէութեան համար : Հայ հոգևորականները, թէ Ռուսաստանում և թէ Տաճկաստանում, այնքան կենթակայ չէին կասկածի և քաղաքական հալածանքի, որքան ուսուցիչներն էին կամ յեղափոխական գործիչները. գրականագէտները, խմբագիրները և այլն : Հոգևոր կոչումն ընդունողների առջև բացւում էր աւելի լայն և ազատ գործունէութեան ասպարէզ, որտեղ շատ հեշտ էր մօտիկից շփուելու բուն ժողովրդական զանգւածների հետ :

Այս տեսակէտից ելնելով էր, ահա որ Հայ դադափարական երիտասարդներից ոմանք, ընտրում էին հոգևոր կոչումը, ձեռնագրւելով փարդապետ կամ քահանայ, որոնք դառնում էին ոչ միայն աղօթողներ, տաճարի սպասաւորներ և խաչի մշակներ, այլ նրանցից շատերը դարձան յայտնի գրականագէտներ, յեղափոխական քարոզիչներ. հասարակական գործիչներ, դատախարակներ և ժողովրդանւէր անձեր\* :

\* Այսպիսիներից յիշատակութեան արժանի են. Խրիմեան Հայրիկ, Հ. Ա. Ալիշան, Գ. Եղ. Սրուանձտեան, Մ. Արքեպ. Յովանեան, Եղիշէ Արքեպ. Գուրեան, Խ. Արքեպ. Նար-Պէյ, Մել. Արքեպ. Մուրադեան, Արսէն Ալոզ. Թոխմախեան, Ն. Եղ. Խարախանեան, այլ և շատերը՝ Էջմիածնի, Երուսաղէմի, Արմաշի և Մխիթարեան Միաբանութիւններից :

Նրանք իրենց հասարակական գործունէութեան պարտականութիւնը հոգևոր ասպարէզի միջոցով կատարեցին և ինչ խօսք, որ յաջողեցին արդարացնել իրենց վրայ գրած յոյսերը:

Հայ եկեղեցին ևս իբրև ազգային, հարազատ մի հիմնարկութիւն, գէպի իրեն էր գրաւում այն երխտասարգներին, որոնք ցանկանում էին հոգևոր կոչման միջոցով ծառայել ազգին ու հայրենիքին:

Ահա այդ երխտասարգներից մէկն էլ, Նիկողայոս Մելիք-Թանդեանն էր, որը Պետերբուրգի համալսարանն աւարտելուց յետոյ, 1900 թւին, անցնում է Էջմիածին ստանալով սարկաւազութեան աստիճան, իսկ յաջորդ տարին (1901) ձեռնադրում է վարդապետ՝ Ներսէս անունով:

Յետագայի նրա հասարակական գործունէութեան փաստերը ցոյց կուտան, որ նա սխալած չէր իւր ընտրած ասպարէզում, այլ ընդհակառակն, հոգևոր կոչումն ընդունելով նա դարձաւ՝ եռանդի, ոգևորութեան և անձնախրութեան մի կատարեալ մարմնացում, հանդիսանալով իբրև տիպար Հայ հոգևորական և իբրև ազգասէր ու ժողովրդանուէր Հայ ազգային-հասարակական գործիչ:

Ամենայն Հայոց կաթուղիկոսը-երջանկայիշատակ խորմեան Հայրիկը-տեսնելով Ներսէս վարդապետ Մելիք-Թանդեանի եռանդն ու ոգևորութիւնը, նրան ուղարկում է Սիւնեաց Սշխարհը, իբրև վանահայր հռչակաւոր Տաթևի վանուց:

Տաթևը հասնելուց յետոյ, Ներսէս վարդապետը, ձեռնարկում է վանքի բարեկարգութեամբ զբաղել:

Վանքում բաց է անում դպրոց, հիմնում է գրադարան, շինել է տալիս նոր սենեակներ, վերանորոգում է ձիթահանք, ընդարձակում է հողերի մշակութիւնը, կանոնաւորում է վանքի անտեսութիւնը, բաց է անում միաբանական ընդհանուր սեղանատուն և որ գլխաւորն է, ութը վիճելի գիւղերը, յաջողում է, օրինական միջոցներով, վանքի սեփականութիւնը դարձնել Մի խօսքով կարճ ժամանակի մէջ, Տաթևի վանքը

բարեգարդում և հասցնում է իւր կոչման արժանի բարձրութեան:

Խորիմեան Հայրիկը, Ներսէս վարդապետին նշանակում է նաև Սիւնեաց թեմի առաջնորդական փոխանորդ, որով և նա առիթ է ունենում շրջել գիւղերը և մօտիկից ծանօթանալ ժողովրդի վիճակին: Նա կարգի է բերում գիւղական դպրոցները, հրաւիրում է ուսուցիչներ, նշանակում է հոգևոր գործակալներ և զբաղւում է նման բազմատեսակ հասարակական գործերով:

Ռուսաց կառավարութիւնը, 1903 թւի Յունիսի 12/25-ին հրատարակեց Նիկարայ Բ. Յարի յատուկ հրովարտակը, որի համաձայն կովկասի Հայոց ազգային-եկեղեցական իշխանութիւնները, պարտաւոր էին պետութեան յանձնելու եկեղեցապատկան և դպրոցապատկան անշարժ կալւածներն ու շարժական հարստութիւնները:

Բովանդակ Հայութիւնը տագնապի մատնուեց: Ի սիլուս աշխարհի ցրւած Հայ գաղութները, բողոքեցին դաժան ցարական կառավարութեան այս հայակործան քաղաքականութեան դէմ:

Հայ ժողովուրդն ու իւր յեղափոխական կուսակցութիւնները, ոգի և եռանդ ներշնչեցին ձերունագարդ Հայրապետին — «Նուազող վշտից Հայրենեաց Հայոց Հայրիկին» որ հրամայեց վանական և դպրոցական վարչութիւններին, ոչ մի բան չը յանձնել կառավարութեան, թողնելով, որ վերջինս բռնութեամբ յափշտակէ իւր ուզածը:

Ահա այդ ծանր և օրհասական օրերին (1903 թւի ամբարան) Ներսէս վարդապետը թեմական գործերով Տաթևից Շուշի է գնում: Ռուսաց սուտիկանութիւնը նրան մի ամիս ձերբակալւած պահում է Շուշում և ապա եկեղեցական կալւածները ստացող «Արտակարգ Յանձնաժողով»-ի հետ, հարիւր ձիաւոր կողակների հսկողութեան ներքեւ, տանում են Տաթևի վանքը ստիպելով, որ վանքի հարստութիւններն ու կալւածները յանձնէ կառավարութեան:

Հակառակ գործադրւած բոլոր ճնշումներին, Ներսէս վարդապետը դիմադրում է Յանձնաժողովի և զինուորական իշխանութեան պահանջներին և ոչ մի բան չի յանձնում, որով և նրանք ստիպւած են լինում ամեն ինչ բռնութեամբ գրաւել\* :

Ռուս բռնապետութիւնը նկատելով, որ իւր գործադրած վայրագութիւնները և «ամենագոր» ցարի հրովարտակը անգոր եղան ծանր հարւած հասցնելու Հայ ժողովրդին, այդ ոճրագործ կառավարութիւնը, 1905 թւին կովկասում յառաջացրեց Հայ-Թրքական արիւնալի ընդհարումները, որոնք այնքան ծանր հետեանքներ ունեցան կովկասի Հայութեան համար :

Բագու, Շուշի, Գանձակ, Թիֆլիս, Երևան, Նախիջևան և դեռ շատ վայրեր, (կովկասում) ուր Հայեր և Թաթար-Թուրքեր միասին էին ապրում, դարձան ազգամիջեան կռիւների ասպարէզ :

Այդ սարսափելի օրերին կովկասում հրապարակ իջաւ Հ. Յ. Գաշնակցութիւնը և իր մարտական խմբերով պայքար մղեց Թուրքերի դէմ, փրկելով Հայ ժողովրդի Ֆիզիքական գոյութիւնը :

Չանգեղուրումն էլ Հայերը կեանքի և մահւան պայքարի էին պատրաստուում : Ինքնապաշտպանութեան ահազանգը հնչել էր ամեն կողմ :

Եւ ահա հրապարակ է գալիս ժողովրդանւէր Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանը, որ յեղափոխականի վայելքաջատարութեամբ մտնում է ժողովրդի մէջ, ոգեշունչ և մարտահրաւէր քարոզներ է խօսում և ինքնապաշտպանութեան հրաւէր է կարդում :

\* Ռուսաց Հայտեաց կառավարութիւնը (որի տխրահռչակ դերակատարներն էին կովկասի փոխարքայ Գոլոցին և ներքին գործոց նախարար Պլեվկն) ի վերջոյ ստիպւած եղաւ ետ առնել իւր տւած հրամանը : Բռնագրաւած կալւածներն ու հարստութիւնները յետ տւին, որով և ցարի կամքը խորտակեց Հայ ժողովրդի անընկճելի կամքի և դիմադրական ոգու ներքե :

Գիշեր ցերեկ անհանգիստ նա գիւղից գիւղ շրջել է և գեղջուկ կամաւորներ հաւաքելով յանձնել է ինքնապաշտպանութեան ղեկավարներին — Քեռի, Արշակ, Գրօ, Կորիւն, Մուրառ, Ազուլեցի Ռաշխէ և ուրիշներ, որոնք բոլորն էլ գնահատել են «Չանգեղուրի Ղևոնդ Երէցին» :

Ներսէս վարդապետի անդուլ աշխատանքով և օգնութեամբ էր, որ Սեբաստացի հերոս Մուրառը 200 մարտիկներով Տաթևի վանքից դուրս է գալիս և անցնելով Ղափան փրկում է այնտեղի 30 գիւղ հայերին, մօտալուս կոտորածից :

Ներսէս վարդապետը Չանգեղուրի հայութեան ինքնապաշտպանութեան կռիւների ընթացքում, շատ մեծ նշանակալից աշխատանք է կատարել, որին քայլ առ քայլ հետևել է ուսսաց ոտիկանութիւնը :

Ի վերջոյ նա, յաշս կառավարութեան նկատում է իբրև «վտանգաւոր» մի անձ, որին սկսում են յայտնի և գաղտնի հալածել, ճնշումների ենթարկել, այն աստիճան, որ արգելում են նրան Չանգեղուրում մնալ :

Այս բոլորի մասին նա գրում է Հայոց Հայրիկին, որը 1906 թւի գարնան նրան հրաւիրում է Էջմիածին, նշանակելով Հայրապետական Գիւանապետ, մի պաշտօն, որն Էջմիածնում շատ կարևոր և պատասխանատու է համարում :

Բնորոշ է այն փաստը, որ Խրիմեան Հայրիկը վերին աստիճանի անկեղծութեամբ սիրել է\* Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանին, որի գործունէութեամբ ուրախ ու հպարտ է զգացել իրեն ծերունազարդ Հայրապետը : Ներսէս վարդապետը ցոյց էր տւել անսահման ժողովրդասիրութիւն, կրթասիրութիւն, շինարարութիւն և յեղափոխականի վայել անձնւիրութիւն : Ներսէս վարդապետն էլ, փոխադարձաբար Հայրիկին էր սիրում : Նրա անցեալ, հայրենանւէր գործու-

\* Խրիմեան Հայրիկը, ընդհանրապէս Էջմիածնի միաբաններին չէր սիրում, որն ունէր իւր խոր պատճառները, որոնց քննութիւնը պատմութեան է վերաբերում . . . :

նէութիւնից և առօրեայ կեանքի յարաբերութիւններից դաս  
և օրինակ էր առնում:

Ռուսաց կառավարութիւնը չը հանդուրժեց, որ Ներսէս  
վարդապետը դիւանապետի պաշտօնով մնայ Էջմիածնում:  
Կառավարութիւնը անհիմն մեղադրանքներ բարդեց նրա վրայ  
և աքսորեց Խրիմի Ս. Խաչ վանքում, 1907 թւի ամբան:

Աքսորական Ներսէս վարդապետի գառն ու տխուր կեանքը,  
նրա անմխիթար և մտատանջ օրերը, աւելի վատթարացան  
երբ նա ըսում է Խրիմեան Հայրիկի մահը (1907 Հոկտ.  
28): Մեծ Թերունու և Հայ Ժողովրդի սիրելի Հայրիկի մահը,  
խոր վիշտ է պատճառում աքսորական Ներսէս վարդապետին:

Ներսէս վարդապետը աւելի քան երկու տարի աքսորա-  
կանի տխուր կեանքը մաշեցնում է Խրիմի Ս. Խաչ վանքում,  
մինչև որ 1909 թւի աշնան, Մատթէոս Բ. Իզմիրլեան կա-  
թուղիկոսի միջնորդութեամբ ազատելով աքսորից վերադառ-  
նում է Էջմիածին: Հայրապետական հրամանով նշանակւում է  
Էջմիածնի «վանական կառավարութեան» նախագահ — մի  
պաշտօն՝ որի ստանձնողը պարտաւոր է խոհեմութեամբ ղե-  
կավարել Էջմիածնի ամբողջ անտեսութիւնը:

Նա գործի է անցնում և առաջին առթիւ՝ վանքի պար-  
տէզներում և անտառում տնկել է տալիս մի քանի հազար  
ծառատունկեր: Կանոնաւորում է կաթնատնտեսութիւնը, գի-  
նեգործութիւնը, հողագործութիւնը, բամբակի մշակութիւնը,  
այգեգործութիւնը, կարգի է բերում վանքի ազարակը և  
զբաղւում է բազմատեսակ շինարարական գործունէութեամբ,  
որի մասին, մինչև այսօր, Էջմիածնում շատերը յարգանքով  
են յիշում Ներսէս վարդապետին, համարելով նրան հմուտ  
տնտես և անշահատէր, շինարար, գործունեայ նախագահ՝  
«վանական կառավարութեան»:


Սկանատեսները պատմում են, որ տարւայ բոլոր եղա-  
նակներին անխտիր, առաւօտից մինչև երեկոյ, նա գործի  
վրայ էր լինում: Մին էլ տեսար՝ ձին հեծած, մօրուքն ու  
մազերը քամուն տւած, նա սրարչաւ գնում էր դաշտը, նայում

էր գութանաւորների աշխատանքին, այնտեղից անցնում էր անտառը ապա այգիներ, խոտնոցներ, ջրապայցներ, կալեր, ագարակ, անտեստուն, գինեատուն, ամբարներ, ամենքին—հօտաղ մշակին, մաճկալ հնձուրին, անտառապահին, այգեպահին, գինեգործին, և բոլորին — «Հօ՛ հօ՛, հէ՛ հէ՛» — կարուկ, խրոխտ հրահանգներ էր տալիս, անհրաժեշտ կարգադրութիւններ էր անում և այսպէս ամբողջ օրը գործի վրայ էր:

Վանքի բոլոր այդ շարքաշ, համեստ և անձնւէր աշխատաւորները սիրում ու յարգում էին նրան և բարեխղճութեամբ կատարում էին իրենց պարտականութիւնը: Ներսէս վարդապետն էլ սիրում էր բնութեան այդ վաստակարեկ մշակներին և առանձին հոգացողութիւն էր ցոյց տալիս նրանց հանդէպ:

Էջմիածինը հազիւ թէ ունեցել է նրա նման «Վանական կառավարութեան» նախագահ: Նա վերակենդանացրել է Էջմիածնի ամբողջ անտեսութիւնը և կանոնաւորել է նրա աղբիւրները: Սակայն, ամառս, որ նրա կազմակերպած այդ մեծ գործը շուտով քայքայւեց, վերահաս համաշխարհային պատերազմի պատճառով:

Ներսէս վարդապետը, աւելի քան երկու տարի (1910 թւից մինչև 1912 թւի ամառը) մեծ հմտութեամբ և բարեխրղճութեամբ, վարեց Էջմիածնի «Վանական կառավարութեան» նախագահի պաշտօնը:



Ը.

ԱՌԱՋՆՈՐԳ ՀԱՅՈՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

Սմենայն Հայոց վեհ. կաթողիկոս Տ. Տ. Գէորգ Ե. ՐԴԸ 1912 թ. Սեպտեմբերի սկզբին, Հայրապետական յատուկ կոնգակով, Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանին ուղարկում է Ատրպատական (Պարսկաստան) թեմի Հայոց գործերը քննելու և անհրաժեշտ կարգադրութիւններ անելու համար։ Նա հասնում է Թաւրիզ, ուր Սեպտ.ի 7-ին գումարւում է Ատրպատականի Հայոց Թեմական Պատգամաւորական Ժողովը։

Ներսէս վարդապետը զեկուցում է տալիս թեմի անկեալ վիճակի մասին։ Մի ընդարձակ տեղեկագիր ներկայացնելով Ժողովին, առաջարկում է կարգի բերել թեմական գործերը և ընտրել Թեմակալ Առաջնորդ։

Ժողովի առաջին գործն է լինում զբաղւել առաջնորդի ընտրութեամբ։

Պատգամաւորական Ժողովը միաձայնութեամբ Առաջնորդ է ընտրում։

«Բարձր. Տէր Ներսէս վ. Մելիք-Թանգեանին թեմիս Առաջնորդ։ Ապա Ժողովը Հայր փոխանորդի\* միջոցով սոյն ընտրութեան մասին յայտնելով Բարձր. Հայր Սուրբին նրան կրկին հրաւիրեց Ժողովը և միահամուռ կերպով խնդրեց, նկատի ունենալով թեմիս անմխիթար կացութիւնը չը մերժէ այս ընտրութիւնը։

\* Տէր Կարապետ Աւագ քահանայ Մանուկեան (Վանեցի) որը, 1909 թ.ից մինչև այժմ վարում է Ատրպատականի Հայոց Թեմական Առաջնորդի փոխանորդութեան պաշտօնը։

«Բարձր, Հայր Սուրբը իւր շնորհակալութիւնը յայտնելով Ժողովին իրեն տրւած վստահութեան համար, յայտնեց որ ամենայն դէպս պէտք է վեհափառի կամքը հայցէ և թեմի տնտեսական և այլ դրութիւնների տագնապալի վիճակը զեկուցէ\*»:

Ներսէս վարդապետը թաւրիղից գնում է Էջմիածին, զեկուցում է տալիս վեհ, կաթողիկոսին Ատրպատականի Հայոց թեմի անկեալ վիճակի մասին: Վեհ, Հայրապետը հաստատում է նրա առաջնորդական ընտրութիւնը: Նա Էջմիածնից անցնում է Թիֆլիս, Բաղու և Ռաստով և մի գումար հանգանակելով, յաջողում է փակել Ատրպատականի Հայոց թեմական Առաջնորդարանի պարտքերը:

Կովկասից անցնում է թաւրիղ, ուր և մնում է իբրև թեմական Առաջնորդ Հայոց Ատրպատականի:

Նրա գալուց առաջ թեմի վիճակը շատ անմխիթար էր: Նախկին Առաջնորդը—կարապետ Եպիսկոպոս Տէր Մկրտչեանը (յայտնի գիտնական) հրաժարւել էր: Թեմական գործերը քայքայւել և երեսի վրայ էին մնացել:

Թեմի Հայոց ազգային—հասարակական կեանքը վերակենդանացնելու համար, անհրաժեշտ էր ուժեղ և կազմակերպիչ մի ձեռք, յանձին Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի:

Նա աննման էռանդով և ոգևորութեամբ լծւում է իւր ծանր պարտականութեանց: Հետզհետէ կարգի է բերում թեմի անկեալ գործերը, կանոնաւորում է տնտեսական աղբիւրները, նշանակում է հոգևոր գործակալներ և այլն:

Նա յատուկ ուշադրութիւն է դարձնում դպրոցական գործերի վրայ: Գիւղերում բաց է անում դպրոցներ, կանոնաւորում է թաւրիղի ազգային դպրոցների հասոյթները: Իւր անչափ կրթասիրութեան շնորհիւ նա յաջողում է վերա-

\* Տես՝ «Արձանագրութեան մատեան Ատրպատականի Հայոց թեմական Պատգամաւորական Ժողովի. Նիստ. 19. 7 Սեպտ. 1912»:

կենդանացնել բովանդակ թեմի դպրոցական կեանքը: Հասարակական և կուլտուրական ամեն տեսակ ձեռնարկներին նա աջակից և հովանաւոր է հանդիսանում:

Նա այցելում է Ատրպատականի Հայոց թեմի երկու



Ս. ԹԱԳԷԻ ՎԱՆՔԻ ԶԱՆԳԱՍԱՆ ԿԱՄՈՐՆԵՐԻ ՏԱԿ

1. Տէր Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան. — 2. Տէր Ղեզնդ վրդ. Բարսեղեան (Վանահայր Ս. Ստեփաննոս Նախավկայի). — 3. Տէր Վահրամ Սարկաւազ (Վանահայր Ս. Թադէի վանքի). — 4. Տէր Արսէն քահանայ Տէր Թադէոսեան (այժմ ձոզեւոր գործակալ Ուրմիոյ Հայոց). — 5. Սենեքերիմ Տէր Յակոբեան (Բանասէր, Էջմիածնի ճեմարանի պատմութեան դասախօս):

պատմական վանքերը (1913 թւի ամրան) — Ս. Թադէոս Առաքելոյ հռչակաւոր վանքը (Մակու) և Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը (Գարաշամբ, Հին Զուղայի դիմաց, Արաքսի պարսկական ափը): Թանօթանում է այս վանքերի հողային, կալածական և այլ տնտեսական աղբիւրների հետ, անհրաժեշտ կարգադրութիւններ է անում և վերադառնում է Թաւրիզ:

Գոյութիւն ունեցող ամեն տեսակ հասարակական մարմինների գործունէութեան նա զարկ է տալիս և քաջալերիչ է հանդիսանում: Իբրև շինարար հովիւ, նա վերանորոգում է Թաւրիզի Հայոց եկեղեցիների զանգակատները, Առաջնորդարանի բակում հանում է հոսող ջրհոր և զբաղւում է նման շինարարական գործերով: Նրա օրով էր, որ Թաւրիզում կառուցւեց (1914-15) Արաւեան Թատրոնի գեղեցիկ շէնքը, յատուկ ծրագրով: Կարճ ժամանակի մէջ, իւր խոհեմ գործերակերպով նա ժողովրդական լայն համակրանքի և յարգանքի արժանացաւ, որի արդիւնքն եղաւ այն, որ Ատրպատականի Հայոց Թեմական Պատգամաւորական Ժողովը գիմում է վեհ. Հայրապետին, խնդրելով, որ Ներսէս վարդապետին ձեռնադրէ Եպիսկոպոս:

վեհ. Կաթուղիկոսը սիրով է ընդունում Պատգամաւորական Ժողովի առաջարկ-խնդիրքը և նրան էջմիածին հրաւիրելով, 1914 թւի Սեպտ.ին, Մայր տաճարում Եպիսկոպոս է ձեռնադրում:

Տէր Ներսէս Եպիսկոպոս Մելիք-Թանգեւանը, վերադառնալով իւր թեմը, ծանր և պատասխանատու պարտականութիւնների տակ է ընկնում:

Ռուս-տաճկական պատերազմը պայթեց 1914 թւի Նոյեմբերին:

Տաճիկները ներխուժեցին Ատրպատական-Սարմաստ, Ուրմի, Խոյ և Թաւրիզ: Քրիստոնէայ ազգաբնակչութիւնը (Հայեր և ասորիներ) հազիւ մազապուրծ եղած, Արաքսն անցաւ, հաստատուելով Հին Նախիջևանի և Գարալագեազի 69 գիւղերում:

Օրհասական և ծանր օրեր էին: Չմրան սաստիկ ցուրտը, թշնամու արշաւող բանակների սարսափը, տեղափոխութեան դժւարութիւնները, տաք շորերի և անունդի պակասութիւնը՝ Պարսկահայ և ասորի գաղթականութեան մատնել էին սուկալի վիճակի:

Գաղթական, տանջւած և հալածական ժողովրդի հետն

էր նաև նրա անձնէր և ժողովրդասէր Առաջնորդը — Տէր  
Ներսէս Եպիսկոպոս Մելիք-Թանգեանը, որ ողի ի բռին աշ-  
խատում էր թեթևացնել իւր բազմատանջ ժողովրդի տառա-  
պանքները: Աւելի քան 40,000 գաղթականութեան (25,000  
Հայ և 15,000 ասորի) պարենաւորման և տեղաւորման հոգան  
ու ծանրութիւնը նրա վրայ է մնում: Ներսէս Եպիսկոպոսը  
հեռագիրներով դիմում է վեհ. կաթողիկոսին, «Եղբայրա-  
կան Օգնութեան Յանձնաժողով»ներին, կովկասի ազգային  
մարմիններին և այլուր, ստանում է մեծաքանակ կենսա-  
միջերգ, տաք շորեր, բժշկական օգնութիւն և դրամ:

Գաղթականութեան օգնութեան և տեղաւորման գործը,  
նա այնքան արագ և կանոնաւոր է կազմակերպում, որ ռազ-  
մաբեմի ռուս բարձրաստիճան զինւորականները հիացած են  
մնում:


Նա հաւասար հոգացողութիւն էր ցոյց տալիս թէ Հայ  
և թէ ասորի գաղթականութեան, անխտիր:

Ժողովուրդը մինչև այժմ պատկառանքով և երախտագի-  
տութեամբ է յիշում, իւր անձնէր և ժողովրդասէր Առաջ-  
նորդին, որ անվերջ շրջել է գիւղից գիւղ, մտել է գաղթա-  
կանութեան մէջ, ամօքել է նրա վշտերը, գոհացում է տւել  
նրա բազմատեսակ պահանջներին, հանգիստնալով իբրև հո-  
վիւ Քաջ և խնամող, գորովագութ Հայր՝ Հայ և ասորի գաղ-  
թականութեան:

Իւր անձնական մեծ ազդեցութեան և կատարած նշա-  
նակալից գործունէութեան շնորհիւ, նա ռազմաբեմի ռուս  
բարձրաստիճան զինւորականութեան հետ կարողացաւ այն-  
պիսի յարաբերութիւն ստեղծել, որ նրա բոլոր դիմում-  
ները յօգուտ գաղթականութեան իսկոյն ընթացք էին ըս-  
տանում:

Տաճկա-պարսկական սահմանագլխի ռուս զօրահրամա-  
նատար դաժան Գեներալ Չեռնազուբովը, սիրով էր ընդա-  
ռաջում Տէր Ներսէս Եպիսկոպոսի դիմումներին, գաղթա-  
կանական այս ու այն հարցի վերաբերմամբ:

Նրա ներկայութիւնը ռազմաբեմում այնքան նշանակալից էր, որ ռուս բարձրաստիճան զինուորականները ակնածելուց զատ, վախենում էին, որ նա կարող էր մի հեռագիր խփել



ՊԱՐՄԱԿԱՆՆԵՐ ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԷՆՆ ՆԱԽԻՉՆԵՆՈՒԹ (1914. Չմեռ)  
1. Տէր Ներսէս Եպիսկոպոս Մելիք-Փանգեան. — 2. Նախկեսանի Առաջն. յաջորդ  
Տէր Սիօն Վարդապետ (եանասակ՝ 1918),

Պետերբուրգ կամ Թիֆլիս, զինուորական բարձրագոյն հրամանատարութեան, բողոքել և ի վերջոյ հեռացնել տալ որ և է բարձրաստիճան զինուորականի, եթէ սա վատ վերաբերմունք ցոյց տալու լինէր գաղթականութեան հանդէպ:

Ռազմաբեմումն էր, որ ցայտուն կերպով ի յայտ եկաւ նրա այնքան ժողովրդանուէր և եռանդուն գործունէութիւնը:

Տաճկական բանակների նահանջից յետոյ, Ասրպատականի Հայութիւնը նորից իւր բնակավայրը վերագարձաւ, զբաղւելով իւր քայքայւած սնտեսութիւնը վերականգնելու գործով:

Յաջորդ տարին (1915 թւի Յուլիան) վրայ հասաւ վասպուրականի բովանդակ Հայութեան մեծ և աղետալի գաղթը՝ դէպի Կովկաս-Պարսկաստան:

Տասնեակ հազար Հայ և ասորի գաղթականներ վասպուրականից անցան Սարմատ: Թաւրիզից իսկոյն Սարմատ է գնում՝ Տէր Ներսէս Եպիսկոպոսը, գաղթականութեան պարենաւորելու և պատսպարելու համար:

Ռուսաց Պետութիւնից և Կովկասահայոց ազգային մարմիններից նա ստանում է դրամ, յատկացնելով գաղթականութեան կարիքներին: Նրա անմիջական ջանքերով բացւում են սննդատու և բժշկական կայաններ, մի հիւանդանոց, գործում են գաղթականական մարմիններ և այլն:

Հաւաքւած որբերի համար բաց է անում որբանոց, իսկ երբ կայուն վիճակ է ստեղծում, կազմակերպում է նաև դպրոցական գործը, աջակից ունենալով տեղացի և տարագիր ուժերին:

Վեհ. Կաթուղիկոսը 1917 թւին, Տէր Ներսէս Եպիսկոպոսին նշանակում է նաև Առաջնորդ Հայոց վասպուրականի:

Նոյն թւի ամրան, Տէր Ներսէս Եպիսկոպոսը գաղթականական և եկեղեցական գործերով, ժամանում է վան: Պատմական և գեղեցիկ վան-վասպուրականի Հայութեան անցեալ պատմութեամբ ոգևորւած, բնութեան չքնաղ տեսարաններով հիացած հայրենասէր Առաջնորդը այցելում է՝ Ս. Բարդուղիմէոսի, վարագի, կարմրւորի, Ս. Գրիգորի, Աղթամարի, Նարեկի, Լիմ և Կտուց Անապատների վանքերը, նշանակում է վանահայրեր, կարգաւորում է վանի Առաջ-

նորդարանի\* գործերը, ծանօթանում է ժողովրդի կարիք-  
ներին և մի շարք անհրաժեշտ կարգադրութիւններ անելուց  
յետոյ, անցնում է Ալաշկերտ, այցելում է Ս. Յովհաննէսի  
հռչակաւոր վանքը, զբաղւում է գաղթականական գործերով և  
ապա գնում է Էջմիածին, իւր ճամբորդութեան և կատարած



Ս. ԳՐԻԳՈՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՆՔԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ (ՎԱՆԻ ՄՕՏ)

1. Տէր Ներսէս Եպիսկոպոս Մելիք-Թանգեան. — 2. Աղբաւարի միաբան Տէր Դանիէլ Ծ. Վրդ. Զատոյեան. — 3. Պրոֆ. Նիկողայոս Աղոնց (յայտնի Հայ գիտնական). — 4. Պրոֆ. Աշխարհ-Բեկ Քալանթար. 5. — Վանի քաղաքապետ (1916-17) Աւետիս Թերզի-բաշեան (1917 Ամառ):

գործերի մասին զեկուցում է տալիս վեհ. կաթողիկոսին և  
վերադառնում է Թաւրիզ:

Ատրպատականի Հայոց Թեմական Պատգամաւորական  
Ժողովի խնդրանքով, վեհ. կաթողիկոսը Տէր Ներսէս Եպիս-  
կոպոսին, շնորհում է Արքութեան տիտղոսը, Հայրապետական

\* Վանի Առաջնորդական յաջորդը 1916-18 թւերին Լիմ-Անապատի վա-  
նահայր Տէր Յովհաննէս Ծ. Վրդ. Հիւսեանն էր:

յատուկ կոնգակով, ի տրիտուր նրա ազգանուէր, անշահասէր  
և բազմարդիւն գործունէութեան:

Ռուսական Յեղափոխութիւնից յետոյ (1917 Նոյեմբ. 7)  
կովկասեան ռազմաճակատը լքելով հեռացան ռուս զօրաբա-  
նակները:

Հայ ժողովուրդը էրզրումից մինչև պարսկական սահմա-  
նագլուխը, մէն մինակ դուրս եկաւ պաշտպանելու տաճկա-  
կան բանակների գէմ: կովկասում և Ատրպատականում, 1918  
թւի գարնան և ամրան, Հայերը կեանքի և մահւան ծանր,  
օրհասական պայքարի օրեր էին ապրում: Տաճիկները ներ-  
խուժեցին կովկաս և Ատրպատական:

Այս օրերին էր ահա, որ տաճկական մի մեծ զօրաբա-  
նակ, հրամանատարութեամբ Ալի-Ինալն Փաշայի, մտաւ  
Թաւրիզ, որ Հայ գաղութին սպառնում էր կոտորած:

Նորից գործի վրայ է ազգանուէր և հայրենասէր Առաջ-  
նորդ Հայոց Ատրպատականի — Տէր Ներսէս Արքեպիսկոպոս  
Մելիք-Թանգեանը, որ իրեն օժանդակ ունենալով «Տասնև-  
վեցի խոշրնոշրդը», կարողացաւ թէ պարսիկների և թէ տա-  
ճիկների հետ այնպիսի խոհեմ, զգոյշ և հեռատես քաղաքա-  
կանութիւն վարել, որ ոչ միայն յաջողեց Թաւրիզի Հայու-  
թիւնը փրկել վերահաս կոտորածից, այլ և տաճիկների  
պահանջած մեծաքանակ դրամական տուգանքը պակասացրեց:

Յիշատակութեան արժանի պատմական խոշոր փաստ է  
նաև այն, որ պարսից պետական բարձրաստիճան պաշտօ-  
նեաները և ժողովրդական լայն խաւերը մեծ պաշտպանութիւն  
ցոյց տւին Հայերին: Թէ պարսից պետութիւն և թէ ժողո-  
վուրդը այնքան ջերմ և անկեղծ կերպով պաշտպան հանդի-  
սացան Հայերին, որ տաճիկները չը յաջողեցին հասնիլ իրենց  
նպատակին:

\* Ատրպատականի Հայոց Թեմական Պատգամաւորական Ժողովի և Թեմա-  
կան խորհրդի անդամներից և ժողովրդական խաւերի ներկայացուցիչներից էր  
կազմւած «Տասնևվեցի Խորհուրդը»:

Զինագաղարից (1918 Նոյեմբ.) յետոյ, տաճիկները հեռանում են Թաւրիզից: Հայ գաղութը տնտեսապէս քայքայւել էր: Գալրոցական գործը երեսի վրայ էր մնացել, սակայն կրթասէր Առաջնորդը, ամեն ջանք ու ճիգ թափում է, յաջողելով վերակենդանացնել ազգային-գալրոցական կեանքը: Երբ 1919 թւին, նա իւր հրաժարականը ներկայաց-



ՂԱՐԱԳԱԳԻ ԻԱՆԱԳԵԱՀ ԳԻՒՂԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻՆԵՐԻ ՀԵՏ (1924, Ամառ)

1. Տէր Ներսէս Արքեպիսկոպոս. — 2. Ատրպատականի Հայոց Թեմական Պատգամաւորական Ժողովի Ատենայեա Հայրապետ Պանիրեան. — 3. Թեմական խորհրդի անդամ՝ Մարգար Յակոբեան:

նում է Պատգամաւորական Ժողովին, ցանկանալով հեռանալ թեմից, բազմահազար Ժողովուրդ թափւում է Առաջնորդարանի բակը, տեղի են ունենում համակրական մեծ ցոյցեր, որոնց նպատակն է լինում չընդունել Առաջնորդի հրաժարականը:

Հայաստանում կատարւած 1921 թւի փետրւարեան ապրւտամբում թիւնից և քաղաքացիական կռիւներից յետոյ, մօտ 8000 Հայ տարագիրներ Զանգեզուրի վրայով անցան Պարս-

կաստան, փայելելով Պարսից կառավարութեան և ժողովրդի  
հիւրասիրութիւնը:

Բազմաճաղար տարազիրներ թափուել էին թաւրիզ, Տէր  
Ներսէս Արքեպիսկոպոսի անմիջական դիմումների վրայ, ար-  
տասահմանի Հայ դաղութներից ստացւեցին մեծաքանակ դու-  
մարներ, յոգում տարազիրների կարիքներին:



ՂԱՐԱԳԱՂԻ ԻՆՐԳԻԹԻՒՆ ՀԱՅ ԳԻՒՂԻ ԱԹՋԵԻ (1924 Ամառ)

Հայ մեկիքները՝ Սրբազան Առաջնորդին դիմաւորում են:

Նա էր, որ անարտունջ և առանց յոգնութեան զեկա-  
վարում էր տարազիրների բազմատեսակ գործերը, որոնք  
տեւեցին աւելի քան երկու տարի:

Հայաստանից թաւրիզ ապաստանած տարազիրներին,  
նա ցոյց տուեց վերին աստիճանի բարեացակամ և սիրալիր  
վերաբերմունք և ամենքը դէպի նրա գործն ու անձը՝ երախ-  
տազխտութեամբ են լեցւած:


Տէր Ներսէս Արքեպիսկոպոսը 1924 թւի Օգոստոսին, հովւական այցելութեամբ շրջագայեց Ատրպատականի Ղարաղաղ գաւառի հայաբնակ շրջանները: Թէ տեղական հայեր և թէ պարսիկները սիրալիր ընդունելութիւն էին ցոյց տւել նրան: Տեղական բնոյթ կրող զանազան հարցեր կարգադրելուց յետոյ նա վերադարձաւ Թաւրիզ, ուր մի շատ կարևոր հարց լուծեց:

Այդ հարցը հետևեալն է.


Տաճկահայաստանի Սղերդ գաւառի Ռնտուան գիւղացի անգլիական հպատակ ԲԺ. Պետրոս Ասրանեանը 1918 թւի Սեպտ.ին մեռնում է Թաւրիզում: Թաւրիզի անգլիական հիւպատոսարանը գրաւում և վաճառում է հանգուցեալ բժշկի գեղեցիկ տունը և շարժական հարստութիւնը: Անգլիական կառավարութիւնը իւրացնում է նաև բժշկի թողած մօտ 16,000 դոլլարի գրամական կարողութիւնը:

Տէր Ներսէս Արքեպիսկոպոսը, երկար և յարատև աշխատանքից յետոյ, հանգուցեալ բժշկի կտակագիրը գտնել է տալիս նրա թղթերում և այդ հիման վրայ էլ յաջողում է, Անգլիական կառավարութիւնից, ետ ստանալ յիշեալ գումարը — 16,000 դոլլարը, որն ապա, ըստ կտակագրի, ամբողջովին անցաւ, Հայոց ազգային իշխանութեան ձեռք, և օգտագործւեց այնպէս, ինչպէս կտակումն էր գրւած:

Յիշենք նաև այն, որ երբ 1925 թւի Յունիսի 12-ին, Պարսկաստանի նախարարապետ և Զինուորական նախարար Բիզա Խան Փահլէվի Թաւրիզ ժամանեց, Տէր Ներսէս Արքեպիսկոպոսը, ազգային մարմինների ներկայացուցիչների և Հայ վաճառականների հետ այցելեց Նորին Մեծութեան, արժանանալով շատ սիրալիր և բացառիկ ընդունելութեան:







ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀՍՅՈՅ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

Առօրեայ աշխատանքի ժամանակ (Փետրիկ 1926)։

Թ.

ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԻՆՔՆ ԻՐ ՄԷՁ

Տէր Ներսէս Արքեպիսկոպոսը Պարսից պետական բարձր շրջաններում վայելում է ազդեցիկ դիրք և անսահման յարգանք: Կառավարութիւնն այնքան խոր վստահութիւն ունի նրա վրայ, որ Հայերին վերաբերեալ բազմաթիւ գատական գործերի լուծումը նրան է յանձնում:

Պարսից Սուլթան Ահմադ-Շահը, գնահատելով նրա հաւատարիմ ծառայութիւնները, 1919 թւին, արքայազան զոյգ Շիրուշխուշիդ (Առիւծ-Արև) շքանշաններ է շնորհում Նորին Սրբազնութեան:

Նրա բոլոր դիմումները կառավարութեան մօտ յարգւում և ընթացք են ստանում:

Պետական բարձրատիճան պաշտօնեաները, թէ Ատրբայատականում և թէ կենդրոնի կառավարութեան մօտ (Թէհրան) յարգանքով և գովեստով են խօսում նրա մասին:

Նա Պարսկաստանում վարում է այնպիսի խոհեմ և շրջահայեաց քաղաքականութիւն, որը նպաստում է թէ Հայ ժողովրդի և թէ պարսից պետութեան շահերին:

Համերաշխութեան ոգին նրա միջոցով միշտ վառ է մնացել Ատրպատականի Քրիստոնեայ և Իսլամ ժողովուրդների միջև:

Օտարազգիների շրջաններում ևս (Եւրոպացիների և Ամերիկացիների) նա խորին յարգանքի է արժանացել: Ամերիկեան «Նպաստամատոյց կամիտէն» (ՐԷԼԻՓ) նրան արամադրել է մեծաքանակ գումարներ, Հայ գաղթականութեան կարիքների համար:

Բըլիֆ Կոմիտէի ներկայացուցիչներն ու քննիչները թաւրիզ ժամանելիս միշտ էլ դիմել են Նորին Սրբազնութեան բարի խորհուրդներին և աջակցութեան, գաղթականական և որբանոցային գործերի վերաբերմամբ:

Իւր խառնւածքով, բնաւորութեամբ, նա կոշտակցական է: Նա Հայ Մարդ է, բառիս ամենալայն առումով:

Խոր սէր և համակրանք է ցոյց տալիս այն բոլոր Հայ հոսանքների հանդէպ, որոնք ծառայում են Հայ ժողովրդի ազատութեան, վերածնութեան և սնտեսական զարգացման գործին:

Նրա սիրտն ու հոգին տողորում են Հայ ազգային-հայրենասիրական միշտ ջերմ ու վառ զգացումներով:

Հայ ազգային կեանքը-եկեղեցին, դպրոց, կուլտուրական ձեռնարկներ, հայրենասիրութիւն, բարեգործութիւն, համերաշխութիւն, բարոյականութիւն, պետական հաւատարմութիւն և նման հարցերն են ահա նրա պարզ խօսակցութեանց և մանաւանդ եռանդուն և կրակոտ քարոզների նիւթ դառնում: Քարոզներ՝ որոնք այնքան ոգևորում են հասարակութեան և խոր ազդեցութիւն թողնում ունկընդիւրների վրայ:

Ատրպատականի Հայութիւնը (և նոյն իսկ ասորիները) տարօրինակ կերպով սիրում և յարգում է իւր բազմադիւն Առաջնորդին, որին վեհ. կաթուղիկոսը քանիցս առաջարկել է, որ հրաժարւի իւր թեմից և գնա Էջմիածին կարևոր գործերի համար, բայց ժողովուրդը միշտ էլ արգելք է հանդիսացել նրա հրաժարւելուն և գնալուն:

Իւր անձնական և հասարակական գործունէութեան մէջ, նա օրինապահ է, արդարադատ, վճռական, շրջահայեաց, պարզասէր և ճշմարտախօս: Հոգեկան արդարամտութիւնը և անյիշաչար ու վեհանձն բնաւորութիւնը նրա գլխաւոր յատկութիւններն են:

Լարւած մեքենայի է նմանում նրա առօրեայ կեանքը: Արևից առաջ վեր է կենում և թէյը խմելուց յետոյ սկսում

է աշխատել: Պարզ է նրա ճաշը: Նոյնքան պարզ նաև ըն-  
թրիքը-մածուն կամ թանապուր:

Հիւրասէր է նա. նրա պարզ սեղանը բաց է ամենքի



ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ

Հանգստի ժամանակ, Ատրպատականի Հայոց  
Առաջնորդարանի բակի պարտեզի մեծ ծառի տակ:

առաջ: Հարուստ, աղքատ, քաղաքացի թէ գիւղացի վայելում  
են նրա հիւրասիրութիւնը:

Մատչելի է նա. ամենքը, անխտիր կարող են անձամբ

ներկայանալ նրան, խօսիլ, բաւարարել ու հեռանալ: Ամեն-  
քին վատահուժիւն է ներշնչել, որ դիմեն իրեն, որ և է գործի  
համար:

Անաչառ է նա, խտրականութեան ոգին բոյն չի դրել  
նրա լայն սրտում: Նրա աչքին բոլորը հաւասար են:

Անողոք է նա, ստի, կեղծիքի, դաւաճանութեան և կեղ-  
տտա քայլերի դէմ:

Իւր հայրենի լեռների նման սէգ ու վեհանձն է նա,  
բարձրահասակ, խրոխտաձայն, այեհեր մօրուքով, ազդու  
նայւածքով, արագ և կենդանի շարժումներով, պարզ ու հա-  
մակրելի բնաւորութեամբ, աննկուն կամքով, նա՛ այժմ, իւր  
վաժտունամեայ պատկառելի տարիքով և քառասնամեայ ազ-  
գային-հասարակական գործունէութեամբ, կանգնել է Հայ  
ժողովրդի մէջ, պատրաստ դեռ ևս տասնեակ տարիներով էլ  
աշխատելու, վառտակելու, յօգուտ ազգին և հայրենիքին:


Այսպէս է ահա Սրբազան Յորեղեարը — Գեր. Տէր Ներ-  
սէս Սրբեպիսկոպոս Մելիք-Թանգեւանը — ազգասէր, Հայ-  
րենանուէր «Քաջ Հովիռ» Հայ ժողովրդի, որի պարտականու-  
թիւնն է ամեն կերպով քաջալերել և բարոյապէս վարձատրել  
Նրան, որ քառասուն տարի շարունակ, անձնուէր և անվհատ  
կերպով գործել է Հայ եկեղեցական, կրթական, դրական և  
հասարակական ասպարէզներում, լիովին կատարելով իւր  
մարդկային և քաղաքացիական պարտականութիւնները՝ իւր  
այնքան սիրած Ազգի ու Հայրենիքի հանդէպ:


### Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ե Ր Ի

Երկու խօսք . . . . .	էջ 2
Ա. Մելիք-Թանգեան տոհմի պատմական ծագումը . . . . .	3
Բ. Ծնունդը, մանկութիւնը և նախնական ուսումը . . . . .	7
Գ. Էջմիածնի Գէորգեան ճեմարանում . . . . .	11
Դ. Ուսուցչական գործունէութիւնը . . . . .	13
Ե. Ուսանող Պետերբուրգի համալսարանում . . . . .	15
Զ. Գրական գործունէութիւնը . . . . .	20
Է. Հոգեւոր կոչումը և գործունէութիւնը . . . . .	22
Ը. Առաջնորդ Հայոց Ատրպատականի . . . . .	26
Թ. Տէր Ներսէս Արքեպիսկոպոսն ինքն իր մէջ . . . . .	33
	47

### Յ Ա Ն Կ Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր Ի

Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք-Թանգեան . . . . .	6
Ա. Թաղէի վանքի զանգակատան կամարների տակ . . . . .	35
Պարսկահայ գաղթականութիւնը Հին Նախիջևանում (1914 Չմեռ) . . . . .	38
Ա. Գրիգորի պատմական վանքը Վասպուրականում (Վանի մօտ) . . . . .	40
Ղարաղաղի Խանազադ գիւղի հայ գիւղացիների հետ (1924 Ամառ) . . . . .	42
Ղարաղաղի Իւրգիւթիւն հայ գիւղի առջև (1924 Ամառ) . . . . .	43
Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք-Թանգեան (Աշխատանքի ժամանակ) . . . . .	46
Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք-Թանգեան (Հանգստի ժամանակ) . . . . .	49





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0339334

35

№ 2  
1931

Մտանալու համար դիմել՝  
<ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԼՈՒՄԲ>  
Թ. Ա. Ի. Բ. Ի. Զ.  
KENTHANDZ  
TAURIS (Perse)